

Ակա խաբու. Ձուկը եփում են, ջրին իւղ, ձու, քացախ աւելացնում, ձուկը առանձին, ջուրը առանձին ուտում:

Ակերի, ինչպէս և խորովածի հետ իբր գոգուիչ համեմունք գործ են ածում հետևեալ տեսակի ~~շուշու~~.

Նառ-Շարաբ.—Թթու նուի հատիկները կեղևից մաքրելով՝ լցնում են մի կաթսայի մէջ, բերանը ամուր ծածկում, դնում կրակին, եռ տալիս, ապա լցնում մի տոպրակի մէջ, քամում, և ծորած հիւթը կըրկին եռացնում, մինչև թանձրանալը:

Հիւն Շարաբ. Պատրաստում են նոյն ձևով, միայն մի քիչ ջուր են աւելացնում առաջին անգամ եփ տալիս,

Ղորաբբա. (Ժուռի՝ կիսահաս խաղողի շարաբ).—Կիսահասուն խաղողը ձմրում են, հիւթը եռացնում մինչև փոքր ինչ թանձրանալը: Գործ են ածում եփած և խորոված ձկնեղէնի հետ և ջրալի կերակրի մէջ, քացախի փոխարէն:

ՀԻՒՆՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Գանձակի զաւառին առանձնայատուկ են ջերմը և իլեա-
րաւին (Bouton d'Alepe, годовникъ).—Արիֆեկայի *) ասե-
լով ջերմը դեռ XIII. դարում այստեղ սաստիկ տարածուած է եղել, և ինչպէս երևում է, հետզհետէ թուլանում է: Իլ-հա-
րասու սալին կրում է գրեթէ ամէն մի զանձակեցի և կան
գերդաստաններ, որոնք չորս հինգ սերունդ յաջորդաբար զրա-
դուել են այդ հիւանդութեան բժշկութեամբ:

Քաղաքում կան եօթը բժիշկ, բայց ոչ մի հիւանդանոց
և կամ բուժարան: Ամբողջ զաւառում միմիայն Ձեզամ և Գե-
տաբէկ գիւղերում կան գիւղական բուժարաններ, առաջինը
երկու, իսկ երկրորդը միայն մի բժշկով: Թէ որպիսի մեծ ծա-
ռայութիւն են մատուցանում այսպիսի բուժարանները՝ երևում
է նրանից, որ 1896 թուին՝ զիմել են Ձեզամի բուժարանը
5340 հիւանդ, 1897-ին 4114, իսկ 1898-ին՝ 9250.

Գիւղացիները զրկուած լինելով բժշկի զիմելու հնարաւո-

*) D. de Montpéroux. Voyage autour du Caucase. IV. էր. 112.

լուծիւնից, դիմում են զիւղական բժիշկ-կանանց, սափրիչնե-
րին, շրջիկ մոլլաների և մանաւանդ գրբաղներին: Գիւղական
կին-բժիշկները զլիաւորապէս տատմէրներն են լինում, սրանք
սովորաբար սերնդից սերունդ աւանդում են իրենց արուեստը և
անձնական փորձառութեամբ դտած միջոցները: Սրանք շատ
սիրալիր են դէպի հիւանդները, նստում են մօտերը երկար զրից
անուն, քաջալերում, լուսադրում: Թէև միքանի տեղական,
վաղուց գոլուծիւն ունեցող հիւանդութիւններ սրանք կարողա-
նում են բժշկել, սակայն շատ անգամ էլ «ունքը շինելու տեղ»
աչքը են հանում»: Այսպիսի անյաջող դէպքերը նրանց վարկը
չեն ձգում, որովհետև ինչպէս իրենք պնդում են և ժողովուրդն
էլ հաւատում՝ առողջանալը կամ մեռնելը ճակատագրից է կա-
խուած: Սրանցից ոմանք նաև «պորտը վեր քաղել» դիտեն,—
ուս ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մասսաթ իւր նախնական դրութեան
մէջ: Այսպիսի կին-բժիշկներից նշանաւոր է գետաշէնցի Թա-
քուն-բերին, որ ոչ միայն իրենց, այլ և շրջակայ գիւղերում
բժշկուծիւն, տատմեթիւն և նոյն իսկ մասսաթ է անում:

Գիւղական վիրաբուժները—սնդչիք,— որ նոյնպէս յաջոր-
դում են որդուց որդի՝ բաւական հմտութեամբ ուղղում են կոտ-
րուած ոսկրները, զանազան եւիւսներ ձգում և տախտակներ
դնելով՝ փաթաթում, առողջացնում: Սրանցից նշանաւոր է
գետաշէնցի Սնդչի Յակոբը, որի եօթը սերունդը վիրաբույժ է
եղել: Սրան մի մի անգամ նոյն իսկ Գանձակ են հրաւիրում
կոտրուածներն ուղղելու:

Սափրիչներն առաւելապէս ատամնաբուժութեամբ են պա-
րապում. սովորաբար թելով կապում են ատամը և յանկարծ
քաշում և կամ աւելի հմուտները գործ են ածում ահազին ու-
նեկներ: Հանճարեղ սափրիչները նշանուած երիտասարդի ա-
տամը քաշելիս՝ տանում նրա գլուխը նշանածի ծնկին են դնում,
որ նրանով յափշտակուած՝ չզղալ ցաւը: Սափրիչները բժշկու-
թեամբ էլ են պարապում և այս ժամանակ զրեթէ միայն մի
միջոց՝ արիւնառութիւն՝ գործ դնում: Նրանք արիւն են առ-
նում կամ ածելիով ծակելով ուսը, կամ տղրուկ դնելով ոտներին
և կամ պուլիկ (банка) ամրացնելով սէջքին:

Մոլլաները և գրքացները առաւելապէս համալիններով և «գիր անելով» են բժշկութիւն անում:

Սակայն և այնպէս՝ գիւղացիները բժշկութիւն համար ամենից աւելի դիմում են սրբերին, ուխտ գնալով զանազան ուխտատեղիներ: Հաւատալով, որ Հիւանդութիւնը տալիս է մի որեւէ սուրբ, որին պատշաճ պաշտօնը չէ մատուցուած, Հիւանդները աշխատում են զուշակել, թէ այդ սուրբը ո՞րը պիտի լինի և լատկապէս նրան ուխտ գնալ, որովհետեւ միւս սրբերը ի պատիւ այդ սրբի, չեն բժշկի նրա տուած պատիժ — Հիւանդութիւնը *):

Գրեթէ ամէն գերդաստան մէջ պառաւները և ծերունիները գիտեն միջանի սովորական Հիւանդութիւնների բժշկութեան միջոցները, և իրենք գործադրում են, և երբ նկատում են, որ իրենց միջոցները չեն օգնում, նոր դիմում են Հեքիմներին, սափրիչներին, մոլլաներին և երբ սրանք էլ ոչինչ չեն վարողանում անել և Հիւանդը արդէն անբուժելի է դառնում՝ նոր տանում են բժշկի մօտ:

Ո՛չ մի նախազգուշական միջոցի չեն դիմում, նոյն իսկ երեխաներից շատ շատերը ծաղկից չեն պատուաստում, այսպէս՝ ամբողջ գաւառում, (առանց քաղաքի) տարեկան միջին թուով միմիայն 750, իսկ քաղաքում՝ 550 երեխաներ **) են պատուաստում: Բացի սրանից նոյն իսկ վարակիչ Հիւանդութիւնների ժամանակ այցելում են Հիւանդներին, որոնք տան մէջ էլ առանձնացրած չեն լինում: Հիւանդի բոլոր քմահաճութիւնները սրբութեամբ կատարում են, տալիս են ուտելու, խմելու ինչ որ էլ ցանկանում է: Ննջեցեալների շորերը առանց ախտահանութեան ենթարկելու դործածում են, Հիւանդութիւնը մինչև չի ծանրանում, ուշադրութիւն չեն դարձնում և այլն:

Այս բոլորի թերի թողածը գալիս է լրացնելու զազրալի սնօտիապաշտութիւնը. այսպէս օրինակ, երբ միևնոյն տանից,

*) Գուշակութեան ձևերը տես Հաւատքի բաժնում:

**) Обзоръ Елисаветпольской губерніи за 1894—98 гг. (Приложение къ всеподданнѣйшему отчету).

անշուշտ աստաճանական միջոցների չդիմելու պատճառով, մի-
քանի մարդիկ իրար հետևից մեռնում են, կարծում են, թե
առաջին մեռնողը «կենդանի» է թաղուել և նա զալիս տա-
նում է միևնույն: Այսպիսի դեպքերում տեսե՛ք թե ինչ են
անում:

Գետաշէն գիւղում Մարկոսենց Սուլթանը մեռնում է. լո-
ղացնելիս տեսնում են, որ տաք է, իսկոյն «Հասկանում են, որ
չարք սիրտն է մտել բնակուել»: Տանում թաղում են: Միքանի
օրից Հարսի եղբայր Սահակը, որ 40 տարեկան կը լինէր, երա-
զումը տեսնում է Սուլթանին, որ իրեն ասել է, թե «եկել եմ
քեզ տանեմ»: Սահակը Հիւանդանում է, և միքանի օր շա-
րունակ երազում տեսնում Սուլթանին, որ կրկնում էր միև-
նոյն խօսքը: Ութ օրից վախճանւում է Սահակը: Հետեւալ
օրը Սահակի բոլորովին առողջ քոյր Սհարը, 30 տարեկան կին,
կրազում տեսնում է թե Սուլթանը եկել է և կամենում է իրեն
էլ տանել: Հետեւալ օրը նա էլ մեռնում է: Մի երկու օրից
մեռնում է նաև մի երեք տարեկան տղայ: Միևնոյն ժամա-
նակ Հիւանդանում են Սուլթանի ամուսինը, տեղբերը, եղբոր
աղջիկները: Վամենալով Հաստատապէս իմանալ, թե արդեօք
այդքան հոգի Սուլթանի պատճառով մեռան և թե նա «կեն-
դանի» է, թե ոչ, մի ձի են տանում Սուլթանի գերեզմանի
վերայ, ննջեցեալի սրտին Համապատասխանող տեղում մի թաշ-
կինակ փռում, վերան զարի ածում և ձին մօտեցնում էր ուտի:
Ձին բոլորովին չի ուտում, փռւացնում է, և կամենում է Հե-
ռանալ: Սրանից Հասկանում են, որ «Սուլթանը կենդանի է,
և այդքան մեռնողներին նա է տարել»: Ուստի գիշերանց եր-
կու տղամարդ և ընդհանրապէս ննջեցեալ և մասնաւորապէս
Սուլթանին լողացնող թաքուն-այանը դնում են, ննջեցեալի
գերեզմանը քանդում: Երբ մօտենում են դիակին, զարշնլի հո-
տից զգուած երկու տղամարդը թողնում են Հեռանում, իսկ
թաքուն-այան մտնում է գերեզմանի մէջ, ճղում Սուլթանի
կուրծքը, սիրտը Հանում, և մի կտոր կտրում, վերցնում: Յե-
տոյ դուրս է զալիս գերեզմանից, կանչում է տղամարդկանց,
ցախ և նալթ ածում Սուլթանի սրտի վրայ և կրակ տալիս:

Մի քիչ լետոյ գերեզմանը լցնում են հողով, և սրտի կտորն առած դադտագողի վերադառնում, բերում սիրտը ձգում ջրի մէջ, խառնում և տալիս հիւանդներին խմելու: Թաքուն-այան, որ ինքը ինձ պատմեց այս՝ հաւատացնում էր, թէ անմիջապէս բոլոր հիւանդներն առողջացան, և աւելացրեց, թէ սրտի այդ կտորը չորացրել պահել են, այժմ երբ վախից հիւանդանում են, մի քիչ փոշիացնում, լցնում են ջրի մէջ, տալիս խմելու, և իբր անմիջապէս լաւանում են:

Մի այսպիսի դէպքի մասին պատմեցին ինձ նաև Փիփ զիւղում, ուր Թաքուն-այանի դերը կատարել էր Տէր Միքայէլը: Միայն սա ամբողջ սիրտը հանել, գերեզմանը ծածկել, վերան կրակ արել, սիրտը, բացի մի փոքրիկ կտորից, վառել և մոխիրը փչել, քամուն էր տուել: Յետոյ սրտից աւելացած մասը թաղել էին օջախի մի անկիւնում, իբր մի նուիրական բան:

Գետաշէնում Նուասարդանց Անայի միակ միամիայ որդին մեռնում է: Մայրը հիւանդանում է և շարունակ կրկնում, թէ երեխան դիշերները գալիս է և ուզում է իրեն տանել: Գնում են բաց անում գերեզմանը, ձղում սիրտը և վառում երեխային: Բայց մայրը դարձեալ չի հանգստանում, և այժմս էլ ասում է թէ մանկան ճկոյթ մատն է իրեն երեւում և ասում. «Եկել եմ քեզ տանեմ»: Կրկին գնում են, բաց անում գերեզմանը, մաղում երեխայի աճիւնը և միջից զտնում ճկոյթը, վառում, և նորից ծածկում: Եւ միայն այժմ մայրը հանգստանում է և լաւանում:

Բանանցեցի Հարիւրամեայ Մուսունց Մնացականը ասում է, թէ մօտ երեսուն տարի առաջ այդպիսի մեռելին հանում էին գերեզմանից, միքանի անգամ հրացան արձակում վերան, քաջ տալիս այս ու այն կողմ և նորից թաղում:

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ե Կ Ա Ն Դ Ե Ղ Ե Ր.

Իլ-եաբասի.— Այս միւսնոյն հիւանդութիւնը պատահում է հալէպում, Բաղդադում, Թէքրանում, Սպահանում և յայտնի է Bouton d'Alep, հալէպ-չոբան, չիլ-չոբան անուններով: Սա վարակիչ չէ, և